ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01

ք.Երևան **«18» նոյեմբերի, 2022թ.**

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նվիրաբերող), մի կողմից, և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանի, որը գործում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նվիրառու), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1602-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նվիրաբերողը ՀՀ կառավարության 2022 հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1602-Ն որոշման համաձայն՝ ՀՀ պետական բյուջեով հատկացված **276,679.0** հազ. դրամ գումարը նվիրաբերում է Նվիրառուի՝ կից **Հավելված 1-ով և Հավելված 2-ով** նախատեսված գույք ձեռք բերելու համար:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Նվիրաբերողը պարտավորվում է Նվիրառուին տրամադրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները՝ վերջինիս կողմից միջոցների տրամադրման հայտն ընդունելուց առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Դրամական միջոցները հանձնվում են Նվիրառուին անկանխիկ՝ ՀՀ կենտրոնական գանձապետարանում բացված նրա բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.2. Նվիրաբերված միջոցները ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1602–Ն որոշմամբ սահմանված նշանակությանն անհամապատասխան կամ ոչ նպատակային օգտագործման դեպքում նվիրաբերությունը վերացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Սույն պայմանագրի շրջանակներում Նվիրառուն իրականացնում է որոշմամբ նախատեսված գույքի գնման գործընթացը՝ դրա համար սահմանված ՀՀ պետական գնումների ընթացակարգերին համապատասխան:

2.4. Նվիրառուն պարտավոր է.

2.4.1. Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված դրամական միջոցները ծախսել ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1602-Ն որոշմամբ նախատեսված նպատակներին համապատասխան:

2.4.2. Նվիրաբերության վերացման դեպքում վերադարձնել Նվիրաբերողի նվիրած դրամական միջոցները:

2.4.3. Վարել նվիրաբերված դրամական միջոցների օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4.4 Սույն պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների և ծախսերի մասին Նվիրաբերողին ներկայացնել հաշվետվություններ վերջինիս կողմից նման պահանջ ներկայացնելուց 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.5. Նվիրառուն պարտավոր է 2023թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ նախատեսված նպատակներով չօգտագործված գումարները և գնումների արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 26-ը:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.3. Սույն պայմանագրի փոփոխություններդը և լրացումները կատարվում են կողմերի ստորագրությամբ՝ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

4.4. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ օրենսդրության պահանջները:

5. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Նվիրաբերող

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ **900011041291**
ՀՎՀՀ՝ 02815457

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
(ստորագրություն)

Նվիրառու

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ք.Երևան, Կ. Ուլնեցու փ. 31

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018007493
ՀՎՀՀ՝ 00846441

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն

Ա. ԱՌՈՒՄՈՆՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ

	Գույքի տեսակ	Ընդհանուր քանակ	Միավոր գին	Ընդհանուր արժեք	«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան համար 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ «Երևանի Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		«Երևանի Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	
					Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք
1	ճաշարանի սեղան՝ երկու աթոռով	24	103,334.0	2,480.00	14	1,446.68	10	1,033.34
2	տարրական դասարանների սեղան՝ մեկ աթոռով	480	50,000.0	24,000.00	288	14,400.00	192	9,600.00
3	հիմնական դասարանների սեղան՝ երկու աթոռով	480	56,667.0	27,200.20	264	14,960.09	216	12,240.07
4	ուսուցչի սեղան	83	38,334.0	3,181.70	43	1,648.36	40	1,533.36
5	ուսուցչի աթոռ	83	18,000.0	1,494.00	43	774.00	40	720.00
6	գրապահարան	155	47,667.0	7,388.40	86	4,099.36	69	3,289.02
7	գրատախտակ	56	141,667.0	7,933.40	736	5,100.01	20	2,833.34
8	դահլիճի աթոռ	542	18,000.0	9,756.00	282	5,076.00	260	4,680.00
9	քիմիայի դասարանի սեղան՝ երկու աթոռով	24	72,667.0	1,744.00	12	872.00	12	872.00
10	ֆիզիկայի դասարանի սեղան՝ երկու աթոռով	24	90,000.0	2,160.00	12	1,080.00	12	1,080.00
11	քիմիայի և ֆիզիկայի ցուցադրական սեղան	4	78,334.0	313.30	2	156.67	2	156.67
	ԸՆԴԱՄԵՆԸ՝							
				87,651.00		49,613.17		38,037.81

Նվիրաբերող՝
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
(ստորագրություն)

Նվիրառու՝
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Հ/Հ	Գույքի տեսակը	Ընդհանուր քանակ	Միավոր գին	Ընդհանուր արժեք	«Երևանի Ղ. Ալիշանի անվան N95 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ		«Երևանի N116 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ		«Երևանի Հ>Կարապետյանի անվան N6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ		«Հերացու ավագ դպրոց» ՊՈԱԿ		«Երևանի Մուրացանի անվան 18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ		«Օհանավանի Ա. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ		«Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ		«Եղեգնաձորի N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	
					Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք
1	Ճաշարանի սեղան, աթոռ /2 նստարան 3 տեղանոց/	89	55,280.90	4,920.00	14	773,932.60	10	552,809.00	12	663,370.80	7	386,966.30	10	552,809,00	8	442,147.20	6	331,685.40	22	1,216,179.80
2	Տարրական դասարանների սեղան մեկ աթոռով	1784	27,578,50	49,200.00	360	9,928,260.00	312	8,604,492.00	384	10,590,144.00	0		192	5,295,072.00	264	7,280,724.00	80	2,206280.00	192	5,295,072.00
3	Հիմնական դասարանների սեղան երկու աթոռով	1683	37,076.70	62,400.00	271	10,047,785.70	220	8,156,874.00	336	12,457,771.20	178	6,599,658.00	138	5,116,584.00	234	8,675,947.80	138	5,116,584.60	168	6,228,885.60
4	Հիմնական դասարանների մեկ տեղանոց սեղան մեկ աթոռով	64	37,125.00	2,376.00	0		0		0		64	2,376,000.0					0		0	
5	Ուսուցչի սեղան	417	17,506.00	7,300.00	56	980,336.00	54	945,324.00	70	1,225,420.00	40	805,276.00	40	700,000.00	46	805,276.00	39	682,734.00	66	1,155,396.00
6	Ուսուցչի աթոռ	417	12,805.00	5,340.00	56	717,124.80	54	691,513.20	70	896,406.00	40	589,066.80	40	512,323.00	46	589,066.00	39	499,426.20	66	845,182.80
7	Գրապահարան	679	35,346.10	24,000.00	84	2,969,072.40	92	3,251,841.20	122	4,312,224.20	75	2,650,957.50	69	2,438,880.9	87	3,075,110.70	70	2,474,227.00	80	2,827,688.00
8	Գրատախտակ	240	47,500.00	11,400.00	35	1,662,500.00	35	1,662,500.00	48	2,280.00.00	19	902,500.00	24	1,140,00.00	32	1,520,000.00	19	902,500.00	28	1,330,000.00
9	ահիճի աթոռ	1356	7,256.60	9,839.00	240	1,741,584.00	160	1.161.056.00	252	1,828.663.00	142	1,030,437.00	104	754,660.00	100	725,660.00	100	725,660.00	258	1,872,202.00
10	Քիմիայի դասարանների սեղան երկու աթոռով	106	66,905.70	7,092.00	12	802,868,40	12	802,868,40	12	802,868,40	24	1,605,736.80	12	802,868,40	12	802,868,40	10	669,057.00	12	802,868.40
11	Ֆիզիկայի դասարանների սեղան երկու աթոռով	82	59,268.30	4,860.00	12	711,219.00	12	711,219.00	12	711,219.00	0		12	711,219.00	12	711,219.00	10	592,683.00	12	711,219.00
12	Քիմիայի և ֆիզիկայի ցուցադրական սեղան	16	18,750.00	300	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00	2	37,500.00
	Ընդամենը			189,028.0		30,372.00		26,578.00		35,805.59		16,984.09		18,062.09		24,665.62		14,283.00		22.322.20

Նկիրաբերող՝
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

_____ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
(ստորագրություն)

Նկիրառու՝
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն

_____ Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
(ստորագրություն)